



# Դանիել Վարուժան

## Բանությունիմ

Պատուհանիս տակէն, ամէն առաւօտ,  
Ուրուականի պէս կ'անցնիս.  
Եւ կուսագեղ գրլուխիդ վրայ կ'արտասուէ  
Տերեւաթափ վարդենիս:

Լուռ թաղին մէջ կը լըսեմ քայլդ, ու գարթնող  
Շունն՝ որ վըրադ կը հաչէ՛.  
Կամ կը լըսեմ քունիս մէջէն ձայնն հագիդ՝  
Որ ծոցդ աղուոր՝ կը տանջէ:

Եւ կը խորհիմ՝ թէ քրնատ ես եւ նօթի.  
Իրանդ հովէն կը դողայ.  
Եւ կը նըստի գանգուրներուդ վըրայ, քո՛յր,  
Եղեամն իբրև շափիւղայ:

Կամ մուճակներդ են պատըռտած, փողոցին  
Ջուրն անոնց մէջ կը ճողփայ.  
Կամ ետեւէդ շրայտօրէն կը սուլէ  
Թուրք սըրիկայ մ'անոպայ:

Եւ կը խորհիմ՝ թէ, տան մէջ, մայրդ է հիւանդ.  
Ցամքած է ձէթն ալ ճրագին.  
Ու դուն կ'երթաս գործատան մէջ աշխատիլ

Լոյսին համար ու կեանքին:

Ես կը խորհի՛մ - եւ խենթի պէս կը բաղձամ  
Վար իջնել, քո՛յր դալկադէմ,  
Քո՛վդ իջնել, համբուրել ձեռքըդ նիհար,  
Եւ հրծծել. — «Քեզ կը սիրեն:» —

Կը սիրեն վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագոյն,  
Կը սիրեն կուրծքըդ քանդուած՝  
Որուն մէջ դեռ կը յամառի Սէրդ երգել  
Արտոյտի պէս սրբարբած:

Կը սիրեն՝ քու անօթութիւնդ ու ծարաւդ,  
Եւ ոսկորներդ ուժասպառ.  
Ես կը սիրեն՝ կոյս աղիքներըդ ցամքած,  
Մագերուդ սուզն՝ ուսէդ վար:

Եւ ես կ'ուզեմ ամփոփել քեզ սրբտի՛ս վրա  
Տատրակի պէս տարագիր,  
Տալ ուժըս քեզ, մըրցանակներըս փառքի,  
Եւ ազգանունս անբասիր.

Կուրծքըս վահան ընել կուրծքիդ նըշաւակ,  
Եւ քօղն ըլլալ պատիւիդ,  
Կրանիտէ բագուկիս տակ պաշտպանել  
Սեռըդ ու գեղըդ անժըպիտ:

Կ'ուզեմ քեզ տալ ինչ որ պայքարն ինձ տըլաւ,  
Ինչ որ խլեցի մարտերով.  
Քեզ պըսակել արիւնիս գոյնն ունեցող  
Յաղթանակիս վարդերով:

Միայն թէ դուն չըլլաս տըժգոյն ու քաղցած,

Արեւուն տակ շրհագաս.

Մօրըդ վերեւ չըմարի ճրագն, ու, ո՛վ քոյր,

Դուն գործատուն ա՛լ չերթաս: